

մանակ կորսնցնելու, մեր կողմէ նոյն խնդրանքը ներկայացուցինք դրաման քանակի հրամանատարութեան մեղի ծանօթ ազդեցիկ սպայի մը միջոցով:

Յաջորդ օրը խմացանք, որ փաշան ձերբակալուած է եւ զրկուած զինուորական ատեանի բանտը (Պէքեր Աղա Պէօլլիկի): Մեր խմբազրութենէն մեկնելէն յետոյ կ'անցնի Պոլսոյ կողմը եւ հոն փողոցին մէջ կը ձերբակալուի:

Մէկ շաբաթ յետոյ, անգլիական դրաման քանակի կեղբոնէն լուր տրուեցաւ, թէ պատրաստ են Մուստաֆա փաշային անցազիր եւ վիզէ տալու Բաթում երթալու համար. (Բաթումի շրջանը այդ ժամանակ անգլիական դրամաման տակ էր): Բայց փաշան արդէն բանտն էր:

Խնդրեցինք անգլիական միջամտութիւնը փաշան բանտէն հանելու համար: Սակայն, մերժում ստացանք այն առարկութեամբ, թէ ատիկա թրքական ներքին խնդիր է, եւ ըստ զինուորադարի պայմաններուն՝ իրենք իրաւունք չունին անոնց ներքին գործերուն միջամտելու: Թէեւ քանի մը ամիս յետոյ իրենց միջամտութեամբ քիւրդ փաշան բանտէն դուրս եկաւ եւ մեկնեցաւ Սիւլէյմանիէ (Միջագետք) իր հայրենիքը, երբ արդէն հայթրքական պատերազմը վերջացած էր, Հայաստանի պարտութեամբ:

Վերոյիշեալ պատմութիւնը ցոյց կուտայ, թէ թուրքերը իրենց արշաւանքի որոշումը տուած էին Խորհրդային իշխանութեան հետ դադանի զինակցութեան պայմանագրութիւնը ստորագրելէ անմիջապէս յետոյ, եւ պատերազմի սաղմը դրուած էր այդ անիծեալ պայմանագրութեան մէջ:

* * *

Մուստաֆա Բեմալ իր տեղեկատուութեան մէջ կ'ըսէ նաեւ, թէ «1920 Յուլիս ամսուն վերջնագիր մը զրկեցինք հայերուն: Սակայն, հայերը իրենց ընթացքին մէջ շարունակեցին: Վերջապէս զօրաշարժէն երեք ու կէս շորս ամիս յետոյ Քէօթիկ-Պարտուզ շրջանակին մէջ հաւաքուած մեր ուժերուն դէմ հայերու յարձակումով պատերազմական շարժումը սկըսաւ»:

Այս հատուածէն մարդ այն տպաւորութիւնը կը կրէ, թէ հայերը, հակառակ թուրքերու լայնքան համբերատարութեան միշտ մտած են թրքական հողերը, ճնշած են թուրք բնակչութիւնը, մինչեւ որ սպառած է թուրքերու համբերութիւնը, եւ անոնք որոշած են վերջնագրով մը Հայաստանի կառավարութիւնը զգաստութեան հրաւիրել, վէճը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Սակայն, Հայաստանի կառավարութիւնը, փոխանակ ըզզաստանալու, այնքան առաջ դացած է, որ յարձակած է Քէօթիկ-Պարտուզ հաւաքուած թուրք ուժերուն դէմ, որը պատճառ դարձած է պատերազմը սկսելուն:

Հայ իմաստուններէն շատեր մինչեւ այսօր ալ թէ՛ հրապարակախօսութեամբ եւ թէ՛ մամուլով, միմիայն կիրքի գոհացում տալու համար, կը շարունակեն յայտնել այս նոյն մըտքերը, ինչ որ կ'ըսէ Մուստաֆա Բեմալ իր տեղեկութիւններուն մէջ: Ասոնց համար եւս Հայաստանի կառավարութիւնն է նախադարձակը:

Ի հարկէ անոնք խնդիրները լրջօրէն քննելու պէտք չեն տեսներ:

Ինչպէս այս յօդուածի սկիզբին բացատրած եմ, թուրքերու առարկութիւնները քննադատութեան չեն դիմանար, որովհետեւ Հայաստանի կառավարութիւնը կամ զինուորական ուժերը երբեք դործ չեն ունեցած թրքական սահմաններէն անդին, որքան ալ թուրքերը, բոլշեւիկներու հետ կնքած դադանի զինակցութեան պայմաններուն համաձայն, յիշեալ հողերը իրենցը համարէին: Այդ ժամանակ տակաւին իրենք իրաւունք չունէին խօսելու շրջանի մը ժողովուրդի եւ հողի անունով, երբ, յաջո ամբողջ աշխարհի, անիկա թուրքիոյ սահմաններուն մէջ չէր իյնար:

Ուրեմն, եղածը հիմէ դուրի պատրուակներ էին միայն՝ վէճ ստեղծելու դիտաւորութեամբ: Այդ ժամանակ թուրքերու մօտ հայերու հետ խաղաղ համաձայնութեան մը գալու տրամադրութիւն գոյութիւն չէ ունեցած երբեք, այլ ընդհակառակը, իրենց տուած վերջնագրով եւ նախազգուշացումներով անոնք կ'աշխատէին հարցերը աւելի կնճռոտել եւ դէպքերու գահավիժումը փութացնել: